


30.07.2014 12:03



Հյուրերը շրջայց են կատարալ գրասենյակի տարածքում և ծանոթացել են պայմաններին: Բացման խոսքում ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը նշել է. «ՀՀ փաստաբանների պալատը խնդիր է դրել իր ուղև բարելավել մարզային փաստաբանների վիճակը և այդ տեսակետից Արմավիր մարզի համակարգողի օժանդակությամբ այստեղ հիմնվել է գրասենյակ, որպեսզի մարզի ավելի քան երեսուն փաստաբանները ակտիվ գործունեություն ծավալելու հնարավորություն ունենան: Ավելին՝ մարզային համակարգողի և մարզի փաստաբանների

նախաձեռնությամբ այսուհետ կիրականացվեն անվճար իրավաբանական խորհրդատվություն սոցիալական անապահով խավի ներկայացուցիչների համար»:



Ըստ Զոհրաբյանի, այս ավանդույթը շարունակական է լինելու և նմանատիպ միջոցառումներ իրականացվելու են նաև մյուս մարզերում:

ՀՀ փաստաբանների պալատի Արմավիր մարզի մարզային համակարգողի գրասենյակը համագործակցության հուշագրեր է կնքել հինգ կազմակերպությունների հետ: «Հայաստան մանուկներ» բարեգործական հիմնադրամին, «Մեր տունը» ՀԿ-ին, «Ընտանիք և համայնք» ՀԿ-ին, «Հայ Միասնության խաչ» ՀԿ-ին և «Արմենիան լայթհաուզ» բարեգործական հիմնադրամին մարզային գրասենյակը տրամադրելու է անվճար իրավաբանական օգնություն:

Ավարտին, «Հայ Միասնության խաչ» ՀԿ-ի սաները ներկայացրեցին իրենց պատրաստած բեմադրությունը:









Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })